

ԳՈՅԱԿԱՆԻ ԵՎ ԱԾԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում բառերի բովանդակալին դիտվածքում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք կարող են ազդել դրանց բառական իմաստի և խոսքիմասային արժեքի հարաբերակցության վրա: Բառիմաստը ծավալի առումով կարող է ընդլայնվել, նեղանալ և ենթարկվել անցման կամ շրջման¹: Այդօրինակ փոփոխությունների ընթացքում բառը ստանում է նոր իմաստ. ընդ որում, այդ նոր իմաստը կարող է բառն արդեն արտահայտած հասկացության ծավալի ընդարձակումը լինել, կարող է նոր հասկացություն արտահայտել կամ բառի ունեցած իմաստին զուգորդել, նրա հետ միաժամանակ գոյություն ունենալ, փոխարինել նրան և այլն²: Այս իրողության մեջ պայմանավորված՝ բառույթի խոսքիմասային արժեքը կամ մնում է անփոփոխ, կամ փոփոխվում է:

1) Բառույթի խոսքիմասային արժեքը մնում է անփոփոխ: Այսպես, V դարում անիմ-ը գոյական է՝ «մոխիր, կրակի կամ այրվածքի մնացորդ, փոշի, մուր» իմաստներով: Հմմտ. Զքաղաքս սողովմայեցւոցն և գոմորացւոց դարձուցեալ յանիւն դատեցաւ (ՀՔԿ): Հետագայում (X—XII դդ.) բառիմաստի նեղացման ճանապարհով անիմ բառը ձեռք է բերել «հողի, փոշու վերածված մարմին՝ ոսկորներ» նշանակությունը՝ մնալով դարձյալ գոյական խոսքի մասի շրջանակներում: Հմմտ. Ցանկամ տեսանել զանիւն մարմնոյ արդարոյն... զանիւն ոսկերաց, բերանոյ, աշից (Սրգ.): Փաստորեն բառույթի խոսքիմասային արժեքը չի փոխվել:

2) Բառույթի խոսքիմասային արժեքը փոփոխվում է: Սա էլ իր հերթին ունի երկու կարգի դրսևորում՝ բառույթի խոսքիմասային արժեքը երկփեղկվում է կամ ենթարկվում լիակատար տեղաշարժի:

Ա. Բառույթի խոսքիմասային արժեքը երկփեղկվում է: Այսպես, աղօթական բառի նախնական նշանակությունն է «աղոթքին հատուկ, մաղթողական», խոսքիմասային արժեքով ածական է, ինչպես՝ Պարգևէ աղօթական բանիցն զվճիռ մահուն (ՆՀԲ): Աղօթական է բանս (ՆՀԲ): Անուհետև բառիմաստի ընդլայնման իրողության մեջ պայմանավորված՝ «աղոթքին հատուկ» ածականական իմաստից ձեռք է բերել «աղոթող՝ խնդրող անձ, ուխտավոր» ածականական և գոյականական իմաստներ՝ երկփեղկվելով խոսքիմասային արժեքով: Այդ արժեքները, սակայն, անխառն արտահայտվում են առանձին կիրառություններով, օրինակ. Ի ձեռն աղօթական եղբարցդ ուխտաւորաց (Շնորհ.)—ած.: Աղօթականքն անդադար լինէին յաղօթս իւրեանց (ՆՀԲ)—գոյ.:

Այսպիսով, բառույթի խոսքիմասային արժեքը երկփեղկվել է:

Բ. Բառույթի խոսքիմասային արժեքը ենթարկվում է լիակատար տեղաշարժի: Այսպես, անձուկ բառի նախնական իմաստն է՝ 1. «նեղ, ընդարձակությունից զուրկ, ոչ լայն», 2. «սակավ, դժվարին, ծանր»: Խոսքիմասային արժեքով ածական է, օրինակ. Անձուկ տեղիք, վայրք, հովիտ (Խոր.)—1: Ծոռս այր Իսրայէլի, եթէ անձուկ է նմա մերձենալ առ նա (ՀՔԿ)—2:

1 Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Հևոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 174—180:

2 Տե՛ս է՝ Վ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 101:

Այնուհետև բառիմաստի անցման գործոնով պայմանավորված՝ անձուկ բառի «դժվարին, ծանր» իմաստների մեջ զարգացել է գոյականական նշանակություն՝ «դժվարություն, նեղություն, նեղսրտություն» վերացարկված իմաստներով ու գոյականի խոսքիմասային արժեքով։ Հմմտ. Վանձուկ և զնեղութիւն հոգւոյն ուսույց ի տառապանս խորհրդոցն (Լմբ.)։ Այսպիսով, լեզվի տարժամանակյա կտրվածքում արձանագրվել է ածական > գոյական խոսքիմասային իմաստի ու արժեքի լիակատար տեղաշարժ։

Բառիմաստի և խոսքիմասային արժեքի հարաբերակցված փոփոխությունները տեսականորեն կարելի է խմբավորել՝ տարբերակելով բառիմաստի ընդլայնումն ու արժեքի երկփեղկումը, բառիմաստի նեղացումն ու արժեք(ներ)ի կորուստը, բառիմաստի անցումն ու արժեք(ներ)ի փոխանցումը³։

Խոսքը մասնավորեցնելով գոյականի և ածականի իմաստափոխությամբ պայմանավորված խոսքիմասային արժեքի տեղաշարժերին՝ հին հայերենում կարելի է ցույց տալ իմաստաարժեքային հարաբերակցված փոփոխությունների հետևյալ դրսևորումները.

1. Բառիմաստի ընդլայնում—ա) արժեքի մասնակի տեղաշարժ՝ տարբեր-
 ժեքություն առաջացումով (գոյ. > գոյ. || ած., ած. > ած. || գոյ.), բ) արժեքի լիակատար տեղաշարժ՝ տարբերություն առաջացումով (գոյ. > ած. > գոյ. || ած.)։

2. Բառիմաստի նեղացում—ա) արժեքի մասնակի տեղաշարժ՝ տարբեր-
 ժեքության կորուստով (գոյ. || ած. > գոյ. կամ ած.), բ) տարբեր դաշտերի

անկախացում՝ համանունական հարաբերությամբ (գոյ. || ած. > ած.)։

3. Բառիմաստի անցում—արժեքի լիակատար տեղաշարժ (գոյ. > ած. կամ ած. > գոյ.)։

Բառիմաստի զանազան փոփոխությունների անմիջական հետևանքը բառույթի բազմիմաստությունն է, որը սինկրետիկ ձևով արտահայտվում է մեկ բառաձևում։ Լեզվի զարգացման ընթացքում, սակայն, բառույթի տրոհված իմաստները համապատասխան նշանակություններով կարող են ստանալ քերականական արտահայտություն՝ խոսքիմասային արժեքներ, Փաստորեն բառական մեկ ձևում ստանում ենք իմաստների ու արժեքների հետևյալ արտահայտությունը. տվյալ բառույթը իմաստային դաշտով բազմիմաստ է, խոսքիմասային արժեքով՝ տարբեր, Այդպիսի միավորները կոչում ենք խոսքիմասային տարբեր քառեր⁴, իսկ քերականական երևույթը՝ խոսքիմասային տարբերություն։

Խոսքիմասային տարբեր բառերը հավասարապես հանդես են գալիս երկու կամ ավելի խոսքիմասային արժեքով այն բանի հետևանքով, որ այդ բառերը տարբեր խոսքիմասային իմաստների համար հատուկ ձևավորում չունեն, ուստի դրանք առանց ձևակազմական փոփոխության շարահյուսական մակարդակում ստանում են տարբեր դեր։ Իկյ կարգի բառերը, որպես բառարանային միավոր, բնագրից դուրս, ընդհանուր ձևով, համատեղում են տարբեր խոսքիմասային իմաստ ու արժեքներ, սակայն դրանց երկփեղկված բառիմաստն ու խոսքիմասային արժեքները տարբերակվում են որոշակի կիրառության մեջ. խոսքիմասային արժեքի բացահայտումը տեղի է ունենում շարահյուսական մակարդակում։

Քննենք գոյականի և ածականի իմաստափոխությամբ պայմանավորված խոսքիմասային տարբերությունների դրսևորումները հին հայերենում, երկու համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերով՝ տարբերակելով նա-

³ Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 20—26։

⁴ Վ. Զահուկյանն այս կարգի բառերը դիտում է իբրև «եռակի» (գոյական-ածական-մակբայ) և երկակի (գոյական-ածական, ածական-մակբայ) գործառույթյունն ունեցողներ (տե՛ս Գ. Զահուկյան, Դամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 526)։

խագրային շրջանի իմաստափոխությունը հինհայերենյան իմաստափոխությունից:

1. Համաժամանակյա տարածեցություն: Հին հայերենի բառային կազմի բառիմաստների և խոսքիմասային արժեքների համաժամանակյա ուսումնասիրությունից պարզվում է, որ լեզվական այդ գոյավիճակում կան զգալի թվով բառեր, որոնք բառիմաստով և խոսքիմասային արժեքով արդեն երկփեղկված են: Դրանք այդ վիճակով, անշուշտ, նախագրային շրջանի ժառանգությունն են: Այդ բառերը տարածքությունն արտահայտում են սկզբնաձևային դրություններ, առանց ձևակազմական փոփոխության և կայուն ձևով առկա են հին հայերենի բառային կազմում՝ երկփեղկված բառիմաստներով և խոսքիմասային արժեքներով. դրանք պայմանականորեն կարելի է անվանել նամաժամանակյա տարածեց բառեր:

Համաժամանակյա տարածեց բառերը հին հայերենում երկփեղկված ուրաքանչյուր իմաստ ու արժեք հիմնականում արտահայտում են առանձին կիրառություններ. տվյալ բնագրում հանդես է գալիս երկփեղկված արժեքներից միայն մեկը՝ համապատասխան իմաստով ու արժեքով: Այդ բառերը հին հայերենում ունեն երկարժեք և եռարժեք դրսևորումներ⁵:

Գոյականի և ածականի իմաստափոխությամբ հայերենի նախագրային շրջանում առաջացած երկարժեք բառերը հին հայերենում ունեն երկու կարգի արտահայտություն՝ գոյական||ածական և ածական||մակբայ⁶:

Ա. Կոյական||ածական գուգահեռ արժեքներ ունեն հետևյալ բառերը.

աւադ	տնապատակտն	այրասպան	բարձակից
աւագակ	անապատաւոր	ազատածին	բերդակալ
այրի	բեմական	աթոռակից	բժշկապետ
աղբաւ	դրացի	աղբակոյտ	զինակիր
կոյր	թզուկ	աղիւսածն	և այլն:
ալետր	լեռնական	ամլորդի	

Հմմտ. Աւագ—1. «իշխան, պետ» (գոյ.), Ծ. զկողմանն աշոյ կարգէր աւագ զբրանելի խորն (Փարպ.): 2. «մեծ, մեծագույն, երեց» (ած.)՝ Այսոքիկ տոնենքեան աւագ տանուտեարք, հանդերձ աւագ սեպհօք (Փարպ.):

Ածական—1. «մեծ-մեծ, երևելի, նշանավոր, սկանավոր» (ած.)՝ Առնէր ժախս մեծամեծս (Ծղ.). 2. «մեծ բան, մեծություն» (գոյ.)՝ Պատմեա՛ դու ինձ զամենայն մեծամեծսն՝ զոր արար Նդիսէէ (ՆՀԲ), 2. «ավագանի, իշխան. մեծահասակ՝ մեծատուն» այր» (գոյ.)՝ Հաճոյ թուեցաւ խորհուրդն՝ իրազաւորին և մեծամեծացն (Ծղ.):

Բ. Ածական||մակբայ արժեքներ են համատեղում հետևյալ բառերը.

լռիկ	աղօտաբար	այրանման	միահամուռ
ձրի	այլաձև	ամրաբնակ	և այլն:
աւագօրէն	այլաձայն	ազատագոյն	

Հմմտ. Ձրի—1. «ձրի տրվող» (ած.)՝ Արի դեղօք բժշկեաց զմեզ (ՆՀԲ): 2. «անհատույց, անվարձ, զուր» (մկբ.)՝ Որպէս յինէն ձրի առէք, նոյնպէս և դուք ձրի տուք (ՆՀԲ):

Ածական—1. «համախմբված, միաբան» (ած.), Հանդերձ միախմբուտ զօրօքն (ՆՀԲ), 2. «բոլորը միասին՝ բոլորով, միանգամից» (մկբ.)՝ Հրեշտակք միախմբուտ կատարեն զամենայն զարդ (ՆՀԲ):

⁵ Սույն հոդվածում կրկնակի միայն խոսքիմասային երկարժեք բառերը թե՛ համաժամանակյա և թե՛ տարժամանակյա կտրվածքներով:

⁶ Հին հայերենում գոյական||ածական և ածական||մակբայ խոսքիմասային արժեքներ համատեղող բառերի մասին տե՛ս Գ. Աւետիքեան, Քերականութիւն հայկական. Վենետիկ, 1815. էջ 228, 535, Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ. 1852, էջ 37—38, 223—224. Մ. Չամբաս, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի. 1854. էջ 185, 288—289:

Այսպիսով, նախագրային շրջանի տարարժեք բառերը հին հայերենի գոյավիճակում արդեն երկփեղկված յուրաքանչյուր արժեք արտահայտում են առանձին կիրառությամբ՝ բնագրից դուրս մնալով որպես տարարժեք բառեր:

II. Տարժամանակյա տարարժեքություն: Իմաստափոխության և խոսքի մասային արժեքի տեղաշարժերի երևույթը, լեզվի զարգացման միևնույն փուլի շրջանակներում թե դրանից դուրս, միշտ կրում է տարժամանակյա բնույթ, քանի որ բառերը միանգամից չեն երկփեղկվում բառիմաստով ու արժեքով կամ էլ չեն ձևափոխվում տրոհված իմաստից ու արժեքից: Համաբարբառների ընձեռած նյութի հիման վրա հին հայերենի բառային կազմի իմաստարժեքային տարժամանակյա ուսումնասիրություն կատարելով՝ պարզել ենք, որ որոշակի բառիմաստ և խոսքիմասային արժեք ունեցող բառույթը լեզվի միևնույն գոյավիճակի ենթափուլերում կա՛մ երկփեղկվել է իմաստային արժեքով, կա՛մ էլ ենթարկվել է տեղաշարժի: Այս իրողությունը պայմանավորված է անցման մասնակի կամ լիակատար բնույթով: Ըստ այդմ էլ, հին հայերենում կարելի է ցույց տալ տարարժեքության առաջացման երկու ուղի՝ կապված իմաստարժեքային տեղաշարժերի մասնակի կամ լիակատար դրսևորումների հետ:

Ա. Մասնակի տեղաշարժերով պայմանավորված տարարժեքություն: Իմաստարժեքային մասնակի տեղաշարժերի հետևանքով տվյալ բառույթը ճյուղավորված իմաստներով ու արժեքներով ի հայտ է բերում տարարժեքություն՝ հանդես գալով երկու կամ ավելի խոսքի մասերի դերով:

Այսպես, V դարում ունենք բազմաթիվ բառույթներ, որոնք բնութագրվում են համեմատաբար «մաքուր» բառիմաստով ու խոսքիմասային արժեքով: Այդ բառերից շատերը հետագայում բառիմաստով և խոսքիմասային արժեքով տրոհվել են՝ ենթարկվելով մասնակի տեղաշարժերի. մի բնադրում տվյալ բառույթն ունի, ասենք, ածականի արժեք, իսկ ժամանակային առումով հաջորդող բնագրերում արդեն համատեղում է ածականի և գոյականի արժեքներ: Ուրեմն հին հայերենում ունենք տվյալ բառույթը և՛ որպես ածական (միարժեքություն), և՛ որպես ածական||գոյական (տարարժեքություն):

Քննենք օրինակներ այդ կարգի բառերից:

1) Գոյականական ծագումով տարարժեքություն: Գոյական > գոյական||ածական տարարժեքությունը հետևանք է այն բանի, որ գոյականի առարկայնության իմաստը ընդլայնվելով կարող է ներառել նաև առարկայի հատկանշային իմաստ: Այս ուղիով գոյական||ածական արժեքներ են համատեղում առակ, հատած, կտաւ, կենդանաբոյս և այլ բառեր: Հմմտ. կտաւ—«բույս, որի ցողունից թել են ստանում» (գոյ.)՝. Ընդ խրձամբ կտաւոյ (ՀՔԿ): Բառիմաստի ընդլայնման օրենքով ձեռք է բերել «նույն բույսից գործած կտոր» գոյականական նոր նշանակություն, որից էլ ածականաբար գործածվելով՝ անցել է «կտավեղեն» հատկանշային նշանակության՝ Մի ղգենուցուս ալլայլախառն՝ զասր և զկտաւ ի միասին (ՆՀԲ)—գոյ.: Բացաւ փեղկ մի ծածկութի կտաւոյ (Փարպ.)—ած.:

Հատած—«հատված, հատոր, կտոր, մաս» (գոյ.)՝ Հատած երրորդ. աւարտաբանութիւն մերոց հայրենեաց (Խոր.): Այս իմաստից է անցել «կտրած տեղը» գոյականական նոր նշանակության, այնուհետև հատկանշային իմաստով գործածվելով՝ ձեռք է բերել նաև «հատված, կտրված» ածականի իմաստ ու խոսքիմասային արժեք, ինչպես՝ Կանգնէր կայր փոքր մի ի վերայ հաւաածի միջոյն (ՅՀ. կթ.)—գոյ.: Յարմատոյ հատած ցամաք փայտ (Շնորհ.)—ած.:

2) Ածականական ծագումով տարարժեքություն: Ածական անունը, երկփեղկվելով խոսքիմասային արժեքով, ներառում է կա՛մ գոյականի, կա՛մ էլ մակբայի խոսքիմասային իմաստ, քանի որ իմաստային դաշտով մերձ հարաբերակցություն ունի դրանց հետ:

ա) Ածական > ածական||գոյական տարարժեքությունը հետևանք է այն բանի, որ ածականի հատկանշային իմաստի մեջ զարգացել է առարկայական

նշանակություն, և տվյալ բառույթը, բնագրում թե դրանից դուրս, գիտակց-վում է իբրև թե՛ ածական, թե՛ գոյական: Այդ կարգի բառերից են՝ աղօթական զինուորական ծննդական վարսաւոր երկնագուն արուեստական իմանալի հաստատուն քաղաքային զարմանազործ դիսաւոր իշխանական պահպանական օրինաւոր լուսաբեր:

Հմմտ. զինուորական—«զինվորին՝ զինվորության հատուկ» (ած.). Ցանկալի եղեալ զինուորական արհեստին (Կոր.): Բառիմաստի անցման հետեւանքով այն աստիճանաբար ներառել է նաև առարկայական իմաստ՝ «զինվոր, ռազմիկ», ու գոյականի խոսքի մասային արժեք: Հմմտ. Միթե զինուորականն ես, և կամ ծառայ (ՆՀԲ)—ած. և դոյ.:

Լուսաբեր—«լուսածին, լույսի պատճառ եղող» (ած.). Լուսաբեր մկրտութիւն (Ագաթ.): Այնուհետև ընդլայնմամբ ձեռք է բերել «լուսանցույց» ածականական նոր նշանակություն, իսկ ըստ առնթրույթյան՝ «պատուհան, լուսամուտ» առարկայական իմաստ և գոյականի խոսքի մասային արժեք՝ Բացեալ պատուհանօք լուսաբերօք (ՆՀԲ)—ած.: Որ չև ևս ի ներքոյ որմոյն եղև, այլ տակաւին լուսաբերօքն առ նա բարբառի (ՆՀԲ)—գոյ.:

բ) Ածական > ածական || մակբայ տարածքությունը հետևանք է այն բանի, որ ածականը բառիմաստի ընդլայնման ճանապարհով առարկայի հատկանշանքային դերից բացի արտահայտել է նաև գործողության հատկանշի ընդհանուր գաղափար⁷: Այդ բառերից են՝

մերկ	անհաղորդ	սրտառուչ	կորովածիգ
բազում	կրկնապատիկ	երկիւղալից	մարդակերպ
խոնարհ	մոլորական	երկնաբերձ	և այլն:

Հմմտ. մերկ—«1. մերկահանդերձ, բաց, մերկ, 2. պարզ, հայտնի» (ած.), բազմիմաստ բառ է: Երկրորդ իմաստի համար հմմտ. Մերկ են դժոխք առաջի նորա, և չիք զգեստ կորստեան (ՀԲԿ): Այս իմաստից էլ զարգացել են բառիս «անշուք, անհրապույր» ածականական նոր նշանակությունը և «պարզապես, սոսկ, լուկ» (ձեի) մակբայական իմաստները, օրինակ՝ Ձմերկ և ղլղկ և զարհամարհեալ ագանեխս (ՆՀԲ)—ած.: Որ ընդ արեգականն մերկ չկարիցեն հայել, նային ընդ ջուրն (ՆՀԲ)—մկբ.:

Կորովածիգ—«կորովի նետածիգ, հաջողակ» (ած.). հմմտ. Քաջ նախարարս, կորովածիգ և հաստաղեղն (Խոր.): Այնուհետև բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել ածականական նոր նշանակություն՝ «կորովի ձգած՝ արձակած». այս իմաստից էլ անցել է գործողության հատկանշի իմաստի՝ «ուժգին, հուժկու» (ձեի) մակբայական նշանակությամբ: Հմմտ. Ի տեսանել զպնդաքարչ աղեղունս և զկորովածիգ նետսն (Կաղանկատ.)—ած.: Ձգեաց կորովածիգ զնետ պատրանաց (Սկեռ.)—մկբ.:

Բ. Լիակատար տեղաշարժերով պայմանավորված տարածեցություն: Իմաստաարժեքային լիակատար տեղաշարժերի հետևանքով բառույթը լեզվի պատմական զարգացման միևնույն գոյավիճակում նախնական մայր արժեքից կարող է անցնել նոր արժեքի՝ ցուցաբերելով խոսքի մասային տարածքություն: Քննենք օրինակներ այդ կարգի բառերից:

1) Գոյականական ծագումով տարածեցություն: Այսպիսի տարածքությունը հետևանք է այն բանի, որ գոյական > ածական խոսքի մասային տեղաշարժերի ընթացքում գոյականը, ներառելով ածականի խոսքի մասային իմաստ և աստիճանաբար կայունացնելով այն, ի վերջո առանձնացել է ածականի խոսքի մասային արժեքով: Այդ բառերը հին հայերենի գոյավիճակում փաստորեն հանդես են գալիս երկու խոսքի մասի իմաստով ու դերով: Այս-

7 Հմմտ. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 137—138. Ա. Քյուրքչյան, Մակբայի հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ (Հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ», Հայոց լեզվի բաժին, 1961, № 1):

պես, ածականական կիրառության ճանապարհով գոհար, գազան, իծ, խորք, խոպան, կոյս, կոշտ, հուր, սառն, պաղ, ոսկի, արծաթ և այլ գոյականներ V դարում ցուցաբերում են ածականի խոսքիմասային արժեքը. այդօրինակ Վ ղարում ցուցաբերում է գոյականի որոշչային կիրառության ակտիվացմամբ, որի հետևանքով առարկայի անունը դառնում է հատկանիշի անուն: Հմմտ. Սառն⁸—«սառած ջուր, սառույց, սառնամանիք, պաղ» (գոյ.)՝ Եւ ձին և սառն և կարկուտ և մրրիկք՝ թէ յայլմէ արարչէ էին... (Եղն.) > «սառ, ցուրտ, սառած, հով» (ած.)՝ Արծուին իջեալ ի սառն աղբւր՝ մկրտի (ՆՀԲ), Հուր—«կրակ, խարույկ, ջահ, բոց» (գոյ.)՝ Վառեալ էր հրով, և ոչ այրէր մոլորենիս (ՀԲԿ) > «հրեղեն, կրակե» (ած.)՝ Եղիա ի հուր կսուս ելեալ (Ոսկ. ՅՀ.):

2) Ածականական ծագումով տարածեցություն: Հին հայերենում ածականական ծագումով ունենք տարարժեքության հետևյալ դրսևորումները՝ ածական||գոյական և ածական||մակբայ, որոնց առաջացումը պայմանավորված է բառիմաստի ընդլայնման մի շարք սկզբունքներով՝

ա) Փոխանուն կիրառության դեպքում հատկանիշը կարող է արտահայտել նաև տեղի իմաստ, աչգպիսով բարձրաւանդակ, խոր, խորշ ածականներն անկախացել են նաև գոյականի խոսքիմասային արժեքով, ինչպես՝ բարձրաւանդակ—«բարձր, բարձունքում գտնվող» (ած.)՝ Եւ ինքն խաղայ գնայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում (Խոր.) > «բարձունք, գահավանդ, հողաբլուր, դիտանոց» (գոյ.)՝ Գահավէժ առնէին զնոսա ի ծայրից բարձրաւանդակին (ՆՀԲ):

բ) Ածական-գոյական բառակապակցության կրճատման հետևանքով ձեռագործ և ձեռագիր ածականները խոսքիմասային իմաստով ու արժեքով անկախաբար արտահայտում են նաև առարկայացված հասկացության գաղափար, Հմմտ. Ձեռագործ—«ձեռքով գործած, ձեռակերտ, շինծու» (ած.)՝ Ձկուսս ձեռագործս (ՆՀԲ) > «ձեռքի գործ, ձեռքով գործած բան, արհեստ» (գոյ.)՝ Ի ձեռագործս քո խորհեցայ (ՆՀԲ)⁹:

գ) Եզակիից անցնելով հովաքական և շանակության՝ գերի և կանաչ ածականները ձեռք են բերել գոյականի առարկայական իմաստ ու խոսքիմասային արժեք, օրինակ. գերի—«օտարություն արտաքսված կամ ստրկության տարված կալանավոր» (ած.)՝ Լո՛յժ զկապ պարանոցի քոյ գերիդ դուստր Սիրովնի (ՆՀԲ) > «գերիների խումբ, սերունդներ, գաղթականություն» (գոյ.)՝ Տիգրան հրաման տալ նստուցանել զգերին հրէից ի քաղաքն Շամիրամայ (Խոր.):

դ) Հատկանիշի ծավալման հետևանքով շատ, սառց, անլոելի, անլիշատակ, բարձրաձայն և այլ ածականներ առարկայի հատկանշայնության իմաստից ձեռք են բերել գործողության հատկանիշի իմաստ ու մակբայի խոսքիմասային արժեք, ինչպես՝ շատ—«բավական, բազում, առատ» (ած.)՝ Յարդ և խոտ շատ է մեր (ՆՀԲ) > «կարի, ստեպ, հաճախ, բազմիցս» (մկբ.)՝ Շատ նուազ եմ քան զիմ նախնիսն (Փարպ.):

Անլիշատակ—«անհիշելի, բնաշխն» (ած.)՝ Անլիշատակ զամբարշտութեանս առնիցէ բերս (Պիտ.) > «առանց հիշատակելու, առանց հիշատակի մնալու» (մկբ.)՝ Զորոյ և ոչ զառաքինութիւն առն պարտ է անլիշատակ թողոյ (ՆՀԲ):

Այսպիսով, ինչպիսի տեսնում ենք, թե՛ մասնակի և թե՛ լիակատար տեղադրարժեքի դեպքում գոյականից առաջացել են գոյական||ածական, իսկ ածականից՝ ածական||գոյական և ածական||մակբայ տարարժեք բառերը:

⁸ Գ. Զահուկյանը կարծում է, որ սառն համատեղում է նաև ածականի իմաստ գեղես հայերենի զարգացման ռեալիստիկական կամ բարբառային շրջանում (Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 207):

⁹ Խնամստի մասնավորման հետևանքով ձեռք է բերել նաև ռաստվածների արձան կամ պատկեր, կոտոր (գարձյալ գոյականական) նշանակություն, Հմմտ. Ոչ պազանեն երկիր ձեռագործաց (ՆՀԲ):

իմ փոփոխնք.

1. խոսքի մասային տարաբնույթությունը այնպիսի քերականական իրողություն է, որոնք առկա են արտահայտության պլանում (ձևականորեն) չտարբերվող և բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր¹⁰:

2. Համաժամանակյա տարաբնույթ բառերը, որպես նախագրային շրջանից ժառանգություն, ստատիկ ձևով առկա են հին հայերենի բառային կազմում:

3. Գոյականի և ածականի իմաստափոխության հետևանքով բառույթի խոսքի մասային արժեքը լեզվի տարժամանակյա կտրվածքում ենթարկվել է մասնակի և լիակատար տեղաշարժերի, որոնք էլ հանգեցրել են խոսքի մասային տարաբնույթության:

4. Ոչդ կարգի բառերը, որպես սկզբնաձևային միավորներ, բնագրից դուրս ցուցաբերելով խոսքի մասային տարաբնույթություն, որոշակի կիրառություն չեն հանդես բերելով հերկված արժեքներից մեկի դերով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ.—Համաբարբառ Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկի, Երևան, 1973:

Եղն.—Համաբարբառ Եղնիկի «Նոր լույս» երկի, Երևան, 1972:

Իմր.—Համաբարբառ Իմրիկի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի, Երևան, 1974:

Լմր.—Ն. Լամբրոնացու Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի (ըստ ՆԶԲ-ի):

Խոր.—Համաբարբառ Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի, Երևան, 1975:

Կաղանկատ.—Մովսիսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղուանից (ըստ ՆԶԲ-ի):

Կոր.—Համաբարբառ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի, Երևան, 1972:

ՀԲԿ.—Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի

Աստուածատուրեան Արապկերցու, Երուսաղէմ, 1895:

ՅԿ. ԿՐ.—Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի (ըստ ՆԶԲ-ի):

ԼԲԲ.—Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. Ա.—Բ, Վենետիկ, 1836—1837:

Շնորհ.—Ներսեսի Շնորհալու Քուրթ ընդհանրական (ըստ ՆԶԲ-ի):

Ոսկ. ՅԿ.—Յովհաննու Ոսկերեանի Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու (ըստ ՆԶԲ-ի):

Պիտ.—Յաղագս Պիտոյից (Մ. Խորենացու «Պատմութիւն» (ըստ ՆԶԲ-ի):

Սկս.—Գրք աղօթից Գրիգորի Սկսալու (ըստ ՆԶԲ-ի):

Սրգ.—Մեկնութիւն Խորենացու Քուրթ ընդհանրական, արարեալ երանելու Սարգսի շնորհալու վարդապետի (ըստ ՆԶԲ-ի):

Փարպ.—Համաբարբառ Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի, Երևան, 1975:

МОРФОЛОГИЧЕСКАЯ ПОЛИСЕМИЯ, ОБУСЛОВЛЕННАЯ СМЫСЛОВЫМ ИЗМЕНЕНИЕМ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ И ПРИЛАГАТЕЛЬНЫХ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. М. ХАЧАТРЯН

Р е з ю м е

Морфологическая полисемия—это такое грамматическое явление, при котором в плане выражения формы не различаются, а в плане содержания налицо оппозиция разных единиц.

В древнеармянском языке морфологическая полисемия на базе существительных и прилагательных имеет два аспекта: синхронический и диахронический. В синхроническом плане слова с морфологической полисемией в качестве наследия дописьменного периода свое расщепленное лексико-грамматическое значение выражают в конкретных употреблениях:

¹⁰ Հմմտ. Գ. Զաչեղյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը. Երևան 1967, էջ 26:

$\begin{matrix} \text{սիւսի} & \nearrow \text{сущ.} \\ & \searrow \text{прил.} \end{matrix}$

 $\begin{matrix} \text{լորի} & \nearrow \text{нар.} \\ & \searrow \text{прил.} \end{matrix}$

В диахроническом аспекте слова вследствие расширения значения могут перейти к полисемии, или сохраняя свое первоначальное лексико-грамматическое значение (*սիւսի* сущ. > прил., *շատ* прил. > нар.), или же изменяя его (*սոսի* сущ. > сущ.//прил., *գիւտոր* прил. > прил.//сущ., *բազում* прил. > прил.//нар.).

THE MORPHOLOGICAL POLYSEMY CONDITIONED BY MEANING CHANGES OF NOUNS AND ADJECTIVES IN THE OLD ARMENIAN LANGUAGE

L. M. KHACHATRIAN

S u m m a r y

Morphological polysemy is such a grammatical phenomenon, in the presence of which from the point of view of expression the forms are not distinguished, and from the point of view of contents opposition of different units are available.

In the old Armenian language morphological polysemy on the basis of nouns and adjectives has two aspects: synchronical and diachronical.

From the point of view of synchronical aspect words with morphological polysemy, as a legacy of prewriting period express their splitting lexico-grammatical significance in concrete applications:

$\begin{matrix} \text{սիւսի} & \nearrow \text{noun} \\ & \searrow \text{-adject.} \end{matrix}$

 $\begin{matrix} \text{լորի} & \nearrow \text{adverb} \\ & \searrow \text{-adject.} \end{matrix}$

In diachronical aspect words in consequence of widening the significance can turn into polysemy either keeping its initial lexico-grammatical significance (*սիւսի* noun > adject., *շատ* adject. > adverb), or changing it (*սոսի* noun > noun//adject., *գիւտոր* adject. > adject.//noun, *բազում* adject. > adject. // adverb).